



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՅ**

« 28 » *դեկտեմբեր* 2016 թ.

№ 2/2380-Ղ

**Հ Ր Ա Մ Ա Ն**

Կ.ԲԱԼԱՅԱՆԻՆ, Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ Ա.ԱՎԱԼՅԱՆԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, նույն հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 31/2016 եզրակացությունը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի օպերատիվ հետախուզության վարչության 1-ին բաժնի գլխավոր օպերիվազորներ Կարեն Բալայանին, Հրայր Խաչատրյանին և նույն բաժնի ավագ օպերիվազոր Արթուր Ավայանին հայտարարել «ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ